«Մանիսա» ՍՊ ընկերության կողմից ՀՀ Սյունիքի մարզի Կապանի ավազակոպճագլաքարային խառնուրդի հանքավայրում արդյունահանման աշխատանքների նախնական գնահատման հայտի վերաբերյալ 2-րդ հանրային քննարկման

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

19.07.2021թ.

ք. Կապան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/, ինչպես նաև ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով՝ որպես ազդակիր համայնք Կապանի համայնքապետարանի նիստերի դահլիճում 2021 թվականի հուլիսի 19-ին ժամը 12:00-ին տեղի ունեցավ «Մանիսա» ՍՊ ընկերության կողմից ՀՀ Սյունիքի մարզի Կապանի ավազակոպճագլաքարային խառնուրդի հանքավայրում արդյունահանման աշխատանքների նախնական համաձայնության վերաբերյալ 2-րդ հանրային քննարկումը:

Քննարկմանը ներկա էին ՀՀ շրջական միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝ Հովիկ Մեսրոպյանը, «Մանիսա» ՍՊԸ տնօրեն՝ Սպարտակ Հայրապետյանը, ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղի դասախոս՝ Ռուբիկ Հովհաննիսյանը, «Ընդերք» ՍՊԸ-ի նախագծող՝ Սահարոն Գևորգյանը, Կապանի համայնքապետարանի աշխատակիցներ, ինչպես նաև այլ քաղաքացիներ:

Հանրային քննարկման մասնակիցների անհատական կազմը կցվում է սույն արձանագրությանը:

Հանրային քննարկումը վարեց Կապան համայնքի ղեկավարի տեղակալ՝ Գոռ Թադևոսյանը: Նա ողջունեց ներկաներին, ներկայացրեց օրակարգը: Որպես ծանոթություն հիշեցրեց, որ հանրային քննարկման վերաբերյալ կարելի է ծանոթանալ «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի 2021 թվականի հուլիսի 2-ի թիվ 121 համարում, ինչպես նաև Կապանի համայնքապետարանի պաշտոնական կայքի հայտարարությունների բաժնում / www.kapan.am /, շրջակա միջավայրի նախարարության պաշտոնական կայքում www.env.am/:

Զեկույցի համար խոսքը փոխանցվեց ՀՀ շրջական միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝ Հովիկ Մեսրոպյանին:

Զեկույց / Հովիկ Մեսրոպյան / - Հարգելի ներկաներ, ես «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝ Հովիկ Մեսրոպյանն եմ: Շրջակա միջավայրի նախարարության փորձաքննական կենտրոնը ներկայացրել է հայտ Սյունիքի մարզի Կապանի ավազակոպճագլաքարային խառնուրդի հանքավայրում Մանիսա տեղամասում օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման վերաբերյալ: Սյունիքի մարզի Կապանի ավազակոպճագլաքարային խառնուրդի հանքավայրի Մանիսա տեղամասում, եթե չեմ սխալվում 2019 թվականի մարտ ամսին

երկրաբանական ուսումնասիրության թույլտվություն էր տրվել Շրջակա միջավայրի նախարարության փորձաքննական կենտրոնի կողմից, որի արդյունքում տվյալ տարածքում ուսումնասիրվել և հաստատվել են պաշարները և նախնական գնահատման հայտով ներկայացվել շրջական միջավայրի նախարարության փորձաքննական կենտրոն:

Համայնքը նախապես տվել է իր համաձայնությունը, որի արդյունքում իրականացվել է առաջին հանրային քննարկումը, իսկ հիմա մենք իրականացնում ենք հանրային քննարկման 2-րդ փուլը: Դրանից հետո մենք ձեռնարկողին կտրամադրենք առաջադրանք, որի հիման վրա կկազմվի ՇՄԱԳ հաշվետվությունը, կիրականացվի 3-րդ հանրային քննարկումը, այսինքն հանրային քննարկման հիմնական փուլը: 4-րդ հանրային քննարկման ժամանակ օրենքի տարրին համապատասխան պետք է տրվի փորձաքննական եզրակացություն՝ դրական կամ բացասական, փուլերի իրականացման վերաբերյալ:

Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության բոլոր ստորաբաժանումները, ինչպես նաև առողջապահության նախարարությունը, կրթության, մշակույթի և սպորտի նախարարությունը, կադաստրի կոմիտեն, ինչպես նաև Սյունիքի մարզպետարանը: Ստացված բոլոր դիտողությունները մենք ուղարկել ենք ձեռնարկողին՝ լրամշակման: Լրամշակումից հետո հայտը կներկայացվի փորձաքննական կենտրոն:

Շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, որտեղ ներակայացրել ենք նախնական փորձաքննական հայտը.

Անտառային կոմիտե – դիտողություն չի ունեցել

Հողերի և ընդերքի քաղաքականության վարչություն - ունեցել է դիտողություն, որի արդյունքում հայտը լրամշակվել է

Անտառային կոմիտե – դիտողություն չի ունեցել

Լիցենզիաների թույլտվությունների և համաձայնությունների վարչություն – ունեցել է դիտողություն, որի արդյունքում հայտը լրամշակվել է

Արտակարգ իրավիճակների նախարարություն – դիտողություն չի ունեցել

Առողջապահության նախարարություն - ունեցել է դիտողություն, կարելի ասել ոչ թե դիտողություն այլ առաջարկություն, որի արդյունքում հայտը լրամշակվել է

Կրթության, մշակույթի և սպորտի նախարարություն – ունեցել է դիտողություն, որն ուղարկվել է նախաձեռնողին

Կադաստրի կոմիտե – դիտողություն չի ունեցել

Անտառային քաղաքականության վարչություն - դիտողություն չի ունեցել

Սյունիքի մարզպետարան – դիտողություն չի ունեցել

Այս բոլոր կարծիքները մենք ստացել ենք և ներկայացրել ենք ձեռնարկողին, որի արդյունքում հայտը լրամշակվել է և ներկայացվել է փորձաքննական կենտրոն:

Ըստ տվյալ տարածքի գործունեության վերաբերյալ ներկայացված նախնական գնահատման հայտի, նշեմ, որ Կարմիր գրքում գրանցված բույսերից և կենդանիներից նշված տարածքում չեն հայտնաբերվել, ինչպես նաև պահպանվող հատուկ տարածքների հետ համընկնում չկա:

Ցանկացած գործունեություն իրականացնելիս, եթե լրանում է ժամկետը ու եթե այն 20 տարով է, 30 կամ 50, դրանից հետո տվյալ տարածքը պետք է վերականգնվի /

ռեկուլտիվացվի /: Անմասն չի մնա նաև այս տարածքը, չնայած այն ավազային հանք է, այսինքն՝ ինքնավերականգնվող է: Ուստի Սյունիքի մարզի Կապանի ավազակոպճագլաքարային Մանիսա տեղամասում այդ աստիճանի ռեկուլտիվացիա չկա, որ պետք է իրականացվի:

Շրջակա միջավայրի նախարարության շրջակա միջավայրում մթնոլորտի օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքների ընթացքում փոշեվնասակար գազերի արտանետումները կապված կլինեն արդյունահանման լցակույտերի ձևավորման ճանապարհների, ավտոտրանսպորտի շարժման հետ, որոնք էլ կգտնվեն նորմայի սահմանում:

Կարծքի / Ռուբիկ Հովհաննիսյան / - «Մանիսա» ՍՊԸ-ն կարելի է ասել անհամեմատելի է լեռնահանքային արտադրության մյուս ոլորտների հետ: Այս ոլորտը շատ պահանջված է, քանի որ այն կնպաստի տնտեսության զարգացմանը, ճանապարհաշինարարությանը և այլն: Մանրակրկիտ աշխատանքներ են տարվում և պահպանվում են բոլոր նորմերը: Բազմիցս եմ եղել հանքավայրում, այն ամենափոքր հանքավայրերից մեկն է: Գտնվելով Ողջի գետի հունում այն բնապահպանական խնդիրներ չի առաջացնում, հակառակը՝ նպաստում է նմանատիպ խնդիրների լուծմանը:

Հաջողություն եմ մաղթում շինարարական աշխատանքների զարգացմանը:

Լրացում / Սահարոն Գևորգյան / - «Ընդերք» ՍՊԸ-ն զբաղվում է երկրաբանահետախուզական և արդյունահանման նախագծերի կազման աշխատանքներով: Այս փուլը նախնական գնահատման լսումների փուլն է: Համաձայնությունը ստանալուց հետո կնախապատրաստվենք հիմնական փուլին, որի ընթացքում ավելի մանրամասն կներկայացվեն բոլոր տեխնիկական կողմերը:

Ամփոփում / Գոռ Թադևոսյան /

«Մանիսա» ՍՊԸ-ի կողմից նախաձեռնված ծրագիրը ուղղունելի է: Ընկերությանը մաղթում ենք հաջողություն և շնորհակալություն բոլորին մասնակցության համար:

Հանրային քննարկման պատասխանատու՝
Կապան համայնքի ղեկավար **Գևորգ Փարսյան**

Ձեռնարկող՝
«Մանիսա» ՍՊԸ տնօրեն **Սպարտակ Հայրապետան**

Հանրային քննարկման վարող՝
Կապան համանքի ղեկավարի տեղակալ **Գոռ Թադևոսյան**

Հանրային քննարկամ արձանագրող՝
Կապանի համայնքապետարանի տնտեսական զարգացման և արտաքին կապերի բաժնի առաջատար մասնագետ **Աննա Սարգսյան**